ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/103

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Մասնակից՝ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ ներկայացուցիչներ՝ Ա.Պարանյանի, Հ.Ենգոյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11011-2019 գրությամբ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 21.06.2019թ. թիվ Ե/40/1500-19 գրության հիման վրա, 02.07.2019թ. «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 21.06.2019թ. թիվ Ե/40/1500-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» Փակ Բաժնետիրական Ընկերության կողմից ս/թ մայիսի 22-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/19» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգ, որով կայանի կարիքների համար ձեռք էին բերվելու տվիչներ: Ընթացակարգին մասնակցության հայտ է ներակայացրել «Արմատ-Գրուպ» ՍՊԸ և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ կոնսորցիումը: Գնահատող հանձնաժողովի 04.06.19թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ, թիվ 1 և 2 չափաբաժիններով ներկայացված ցածր գնային առաջարկով 1-ին տեղ է զբաղեցրել «Արմատ-Գրուպ» ՍՊԸ և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ կոնսորցիումը:

06.06.19թ. «Արմատ-Գրուպ» ՍՊԸ և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ կոնսորցիումը գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկել է իր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը, որոնք տրամադրվել են գնահատող հանձնաժողովին:

11.06.19թ. հրավիրվել է գնահատող հանձնաժողովի նիստ՝ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նպատակով, որի ընթացքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է առաջարկվող ապրանքների անհամապատասխանություն հրավերով պահանջներին:

ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.17թ. որոշման 47-րդ կետի համաձայն, մասնակցին տրվել է մեկ աշխատանքային օր՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով, սակայն շտկման փոխարեն «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Ղազարյանը գնահատող հանձնաժողովին հասցեագրված նամակ է ուղարկել:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.17թ որոշման 45-րդ կետի պահանջներով, Ձեզ եմ ներկայացնում «Արմատ-Գրուպ» ՍՊԸ և ««ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ կոնսորցիումի վերաբերյալ տվյալները՝ համապատասխան հիմքերով:»:

3. <u>«Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 03.07.2019թ.-ին գրությամբ դիմել է Մասնակցին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11011-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

«Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-87/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն /կոնսորցիումով/:

«Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի միջև 16 մայիսի 2019թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի 2.2. կետի համաձայն՝ «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն պարտավորվում է իրականացնել «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ցանկացած հիմնավորված պահանջ՝ ուղղված ընթացակարգի փաստաթղթերի լրացմանը և հստակեցմանը:

Պայմանագրի 2.7 կետի համաձայն՝ «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն պարտավորվում է իրականացնել ապրանքի մատակարարումը:

Նույն պայմանագրի 4.3 կետի համաձայն՝ կոնսորցիումի կողմերը պատասխանատվություն են կրում իրենց կողմից ստանձնած պարտավորությունների համապատասխան:

Նույն պայմանագրի 4.5 կետի համաձայն՝ կոնսորցիումի կողմերը պարտավոր են կատարել բոլոր այն պարտականությունները, որոնք ստանձնել են նշված պայմանագրով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /կոնսորցիում/ առաջարկել է շտկել՝ ներկայացված համատեղ գործունեության պայմանագիրը, մասնավորապես՝ համատեղ գործունեության պայմանագրում հստակեցված չէ յուրաքանչյուր անդամի հրավերով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորման ստանձնումը, շահույթի բաշխումը:

Արդյունքում «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի /կոնսորցում/ կողմից կատարվել էր շտկումը և գնահատող հանձնաժողովին ներկայացրել՝ համատեղ գործունեության պայմանագրի շտկում-լրացումը՝ կնքված 31.05.2019թ:

Վերոհիշյալի արդյունքում «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/ ճանաչվել են առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /կոնսորցիում/ առաջարկելով՝ սահմանված եռօրյա ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության 3 կետի համաձայն՝ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի /կոնսորցում/ կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ /համապատասխան արձանագրությունը կցվում է/:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման 47-րդ կետի պահանջներով, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /կոնսորցիում/ շտկել անհամապատասխանությունը:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության 3 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ հայտը՝ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հիմքով:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-87/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/ և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /կոնսորցիում/ առաջարկելով՝ սահմանված եռօրյա ժամկետում ներկայացնել որակավորումը հավաստող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության 3 կետի համաձայն՝ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման 47-րդ կետի պահանջներով, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին շտկել անհամապատասխանությունը:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության 3 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ հայտը՝ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հիմքով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքի վրա, և այսպես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության 3 կետով՝ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները արձանագրվել են ներկայացված Հավելված 6 և Հավելված 6.1-ում:

Այպիսով, համաձայն «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի միջև 16 մայիսի 2019թ. կնքված համատեղ գործունեության /կոնսորցիում/ պայմանագրի 2.2. կետի համաձայն՝ «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն պարտավորվում է իրականացնել «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ցանկացած հիմնավորված պահանջ՝ ուղղված ընթացակարգի փաստաթղթերի լրացմանը և հստակեցմանը:

Նույն պայմանագրի 4.3 կետի համաձայն՝ կոնսորցիումի կողմերը պատասխանատվություն են կրում իրենց կողմից ստանձնած պարտավորությունների համապատասխան, իսկ 4.5 կետի համաձայն՝ կոնսորցիումի կողմերը պարտավոր են կատարել բոլոր այն պարտականությունները, որոնք ստանձնել են նշված պայմանագրով:

Վերոհիշյալ համատեղ գործունեության պայմանագրի վկայակոչված դրույթներից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրի 2.7 կետի համաձայն՝ «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն պարտավորվում է իրականացնել ապրանքի մատակարարումը, ուստի գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ Հավելված 6.1՝ ապրանքի տեխնիկական բնութագիրը, լրացնելու և շտկելու պարտականությունը կրում էր «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն, ուստի ակնհայտ է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն նշված ընթացակարգի շրջանակում չի ստանձնել պարտավորություն կազմել Հավելված 6.1-ը և կատարել

համապատասխան շտկում նշված փաստաթղթում: Ավելին, Հավելված 6.1-ի վերաբերյալ ներկայացված պարզաբանումը կազմվել և ներկայացել է «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի կողմից՝ պայմանագրի 2.2. կետի համաձայն՝ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով:

Վերոհիշյալ փաստը ապացուցվում է նաև «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությամբ /կցվում է/, որով հավաստվում է, որ կնքված կոնսորցիումի պայմանագրի համաձայն՝ հայտում, այդ թվում նաև ընթացակարգի այլ փաստաղթերում շտկում կատարելու պարտականությունը դրված է «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի վրա, որն էլ պատասխանատվություն է կրում նշված պարտավորության պատշաճ կատարման համար:

Ուստի գտնում ենք, որ նման փաստական հանգամանքների պայմաններում «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետով սահմանված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանզի վերագրվող պարտավորությունը կրել է ոչ թե «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն, այլ «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն:

Իսկ կոնսորցիումի պայմանագրի 4.3 կետի համաձայն՝ կոնսորցիումի կողմերը պատասխանատվություն են կրում իրենց կողմից ստանձնած պարտավորությունների համապատասխան:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/103 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից տպիչների ձեռքբերման նպատակով հայտարարավել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/19» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր/:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/19» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չաւիաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չաւիաբաժնում (չաւիաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հավելվածով «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր/ պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)' անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր/:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցին, ծանուցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 11.06.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է հետևյալը. *«Նմանատիպ պայմանագրերը ներկայացված են ուկրաիներենով, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Ներկայացվել են միայն թիվ 1802000937 և թիվ 39/17 պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումները, որոնք ստորագրված և կնքված չեն, իսկ թիվ 14547/53-124-01-18-09209 պայմանագրի կատարման վերաբերյալ ոչինչ ներկայացված չէ, ինչպես նաև չեն ներկայացվել հաշիվ ապրանքագրերը:*

(Հավելված 6.1-ում լրացված չէ հրավերով պահանջվող «Ապրանքային նշանը» դաշտը, Հավելված 6.1-ը անհրաժեշտ է լրացնել հայերեն, թիվ 1 չափաբաժնով առաջարկվող ապրանքի համար սահմանված էր պահանջ «Չափման վերին սահմանը 1 (±0,5) կՊա)», ինչը առաջարկվող ապրանքի բնութագրում նշված է 1 կՊա, հրավերով պահանջվող ապրանքի անվտանգության դասը՝ 3Н է, առաջարկվող ապրանքինը՝ 4Н, ներկայացված տեխնիկական բնութագրից հստակ չէ բլոկի տեղադրված լինելու հանգամանքը, քանի որ հրավերով պահանջվում էր փականների բլոկները տեղադրված ճնշման տվիչ, նշված չէ միակցիչի (разъем) տիպը, թիվ 2 չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը լիարժեք չէ, մասնավորապես նշված չէ անվտանգության դասը, իմպուլսային գծերի միացման համար նախատեսված լինելու հանգամանքը, իմպուլսային գծերի միացման տիպը, առկա է հրավերով պահանջվող ապրանքի և առաջարկվող ապրանքի չափսերի անհամապատասխանություն, մասնավորապես՝ հրավերով պահանջվող Элемерբլոկն ունի 120 մմ երկարություն, իսկ առաջարկվող Сапфир- 22МПСբլոկը՝ 194 մմ: Հավելված 6.1-ի «Անվանումը» դաշտում անհրաժեշտ է լրացնել միայն ապրանքի անվանումը, նշված «համաձայն կից նկարագրության» և «համաձայն կից գծագրերի» արտահայտությունների փոխարեն տեխնիկական բնութագրում լրացնել անհրաժեշտ պարամետրերը: Ներկայացված ուկրաիներենով փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել հրավերով պահանջվող լեզուներից որևէ մեկով)»:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման 47-րդ կետի պահանջներով, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ շակել անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի 14.06.2019թ. կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար հետևյալ պատճառաբանությամբ. *«Նմանատիպ պայմանագրերը ներկայացված են ուլրաիներենով, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Ներկայացվել են միայն թիվ 1802000937 և թիվ 39/17 պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումները, որոնք ստորագրված և կնքված չեն, իսկ թիվ 14547/53-124-01-18-09209 պայմանագրի կատարման վերաբերյալ ոչինչ ներկայացված չէ, ինչպես նաև չեն ներկայացվել հաշիվ ապրանքագրերը:*

(Հավելված 6.1-ում լրացված չէ հրավերով պահանջվող «Ապրանքային նշանը» դաշտը, Հավելված 6.1-ը անհրաժեշտ է լրացնել հայերեն, թիվ 1 չափաբաժնով առաջարկվող ապրանքի համար սահմանված էր պահանջ «Չափման վերին սահմանը 1 (±0,5) կՊա)», ինչը առաջարկվող ապրանքի բնութագրում նշված է 1 կՊա, հրավերով պահանջվող ապրանքի անվտանգության դասը՝ 3Н է, առաջարկվող ապրանքինը՝ 4Н, ներկայացված տեխնիկական բնութագրից հստակ չէ բլոկի տեղադրված լինելու հանգամանքը, քանի որ հրավերով պահանջվում էր փականների բլոկները տեղադրված ճնշման տվիչ, նշված չէ միակցիչի (разъем) տիպը, թիվ 2 չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը լիարժեք չէ, մասնավորապես նշված չէ անվտանգության դասը, իմպուլսային գծերի միացման համար նախատեսված լինելու հանգամանքը, իմպուլսային գծերի միացման տիպը, առկա է հրավերով պահանջվող ապրանքի և առաջարկվող ապրանքի չափսերի անհամապատասխանություն, մասնավորապես՝ հրավերով պահանջվող Элемерբլոկն ունի 120 մմ երկարություն, իսկ առաջարկվող Сапфир- 22МПСբլոկը՝ 194 մմ: Հավելված 6.1-ի «Անվանումը» դաշտում անհրաժեշտ է լրացնել միայն ապրանքի անվանումը, նշված «համաձայն կից նկարագրության» և «համաձայն կից գծագրերի» արտահայտությունների փոխարեն տեխնիկական բնութագրում լրացնել անհրաժեշտ պարամետրերը: Ներկայացված ուկրաիներենով փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել հրավերով պահանջվող լեզուներից որևէ մեկով)»:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ որոշման 47-րդ կետի պահանջներով, նիստը կասեցրել էր մեկ աշխատանքային օրով՝ հնարավորություն տալով «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել, սակայն «Արմատ-

Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Ղազարյանը գնահատող հանձնաժողովին է հասցեագրել գրություն, որտեղ նշել է, որ պահանջվող 3-րդ անվտանգության դասի փոխարեն առաջարկվել է 4-րդ դասը, քանի որ արտադրող գործարանի պնդմամբ այդ սարքերը բացարձակապես նույնն են: Տարբերությունը կայանում է լրացուցիչ փորձարկման և հավաստագրի առկայության մեջ: Փորձարկման և հավաստագրման գործընթացը տևում է 3-6 ամիս: Սերտիֆիկացման դեպքում սարքերի արժեքը կավելանա 50-75 տոկոս: «ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի բոլոր պայմանագրերը ուկրաիներեն լեզվով են և սահմանված մեկօրյա ժամկետում դրանց թարգմանելը անհնար է: Ա.Ղազարյանը նաև նշել է, որ որևէ այլ փաստաթուղթ «ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն հրաժարվում է ներկայացնել:

Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով որոշել է մերժել «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն և «ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր/ հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11011-2019 գրությամբ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 61-րդ կետի 1-ին ենթակետի

համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Հրավերի համաձայն՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած

մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հրավերով նախատեսված է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ»

պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին՝ ունենալով պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն, որի առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող: Մասնակիցը նաև պարտավոր է ապրանքների գնման դեպքում ներկայացնել՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ՝

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից տպիչների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/19» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր/:

Հանձնաժողովի 11.06.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում, ինչպես նաև թիվ 6.1 հավելվածում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ շակել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 14.06.2019թ. կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար, քանի որ սահմանված ժամկետում «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել: Անհամապատասխանությունները շտկելու փոխարեն «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Ղազարյանը գնահատող հանձնաժողովին է հասցեագրել գրություն, որտեղ նշել է, որ պահանջվող 3-րդ անվտանգության դասի փոխարեն առաջարկվել է 4-րդ դասը, քանի որ արտադրող գործարանի պնդմամբ այդ սարքերը բացարձակապես նույնն են: Տարբերությունը կայանում է լրացուցիչ փորձարկման և հավաստագրի առկայության մեջ: Փորձարկման և հավաստագրման գործընթացը տևում է 3-6 ամիս: Սերտիֆիկացման դեպքում սարքերի արժեքը կավելանա 50-75 տոկոս: «ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի բոլոր պայմանագրերը ուկրաիներեն լեզվով են և սահմանված մեկօրյա ժամկետում դրանց թարգմանելը անհնար է: Ա.Ղազարյանը նաև նշել է, որ որևէ այլ փաստաթուղթ «ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն հրաժարվում է ներկայացնել:

Հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով՝ որոշել է մերժել Մասնակցի հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա

լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, ինչպես նաև առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցն պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և հրավերով սահմանված առաջարկվող ապրանքի՝ տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն / համատեղ գործունեության պայմանագիր/, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով համապատասխանության շտկումներ՝ խախտել է

գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Մասնակիցն իր դիրքորոշմամբ հայտնել է, որ համաձայն «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի միջև 16.05.2019թ. կնքված համատեղ գործունեության /կոնսորցիում/ պայմանագրի՝ «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն պարտավորվում է իրականացնել «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ցանկացած հիմնավորված պահանջ՝ ուղղված ընթացակարգի փաստաթղթերի լրացմանը և հստակեցմանը: Մասնակիցը նշել է, որ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն նշված ընթացակարգի շրջանակում չի ստանձնել պարտավորություն կազմելու թիվ 6 և 6.1 հավելվածը, ինչպես նաև ներկայացնելու «մասնագիտկան փորձառության» չափորոշիչը և կատարել համապատասխան շտկում նշված փաստաթղթում, իսկ տվյալ ընթացակարգի մասով վերը նշված փաստաթղթերը շտկելու պարտականությունը դրված էր «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն, ուստի այս պարագայում «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ վերագրվող պարտավորությունը կրել է ոչ թե «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն, այլ «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն:

Այս կապակցությամբ Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

4) համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ (հայտեր):

Սույն դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/19» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգին մասնակիցները հանդես են եկել համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիում), ուստի մասնակիցները պետք է

կրեն համատեղ և համապարտ պատասխանատվություն, հիմք ընդունելով Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ ենթակետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11011-2019 գրությամբ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**